

ՄԻԱՎՈՐՎԵԼՈՎ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ

«Նարեկացի» արվեստի միությունը «Գալուստ Կիլլայենկեան» Հիմնարկության աջակցությամբ իրականացնում է «Միավորվելով արվեստի միջոցով» ծրագիրը: Ծրագրի նպատակն է արվեստի ու մշակույթի միջոցով նպաստել երիտասարդների ներգրավումը քաղաքացիական հասարակության զարգացմանն ուղղված նախաձեռնություններում, ինչպես նաև ստեղծել կապ Հայաստանում և արտերկրում բնակվող հայ երիտասարդ արվեստագետների միջև:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է երիտասարդների համար կազմակերպել մարդու իրավունքների և համամարդկային արժեքների հետ կապված դասախոսություններ, ֆիլմերի դիտումներ և քննարկումներ հայտնի արվեստագետների, իրավաբանների, մեդիա մասնագետների, ռեժիսորների և լրագրողների հետ:

Միջոցառումներն իրականացվելու են «Նարեկացի» արվեստի միությունում 2020թ. փետրվարից հուլիս ընկած ժամանակահատվածում՝ ամիսը 2 անգամ հաճախականությամբ:

Ծրագրին կարող են դիմել՝

18 - 35 տարեկան երիտասարդներ

Մարզաբնակ երիտասարդների մասնակցությունը ծրագրին քաջալերվում է

Դիմումի ձև

1. Անուն՝
2. Ազգանուն՝
3. Ծննդյան ամսաթիվ՝
4. Քաղաք/գյուղ՝
5. Հասցե՝
6. Հեռախոսահամար՝
7. Էլ. փոստ՝

Ծրագրին դիմելու վերջնաժամկետն է 2020թ. հունվարի 31-ը:

Լրացված ձևաթուղթն խնդրում ենք ուղարկել barev@naregatsi.org էլ. փոստին Թեմա բաժնում նշել «Միավորվելով արվեստի միջոցով» ծրագիր կամ այցելել «Նարեկացի» արվեստի միություն

Հասցե՝ ՀՀ, Երևան, 0010, Վարդանանց 16/1

Հեռ.՝ + (374 10) 58 01 05, + (374 77) 58 05 35